<<ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ>>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ս.ԼՊՈՒՏՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԵՎ ԱՂՋԻԿՆԵՐԻ

ԿԱՅԾԱԿՆԱՅԻՆ ՇԱԽՄԱՏԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի պատանիների և աղջիկների կայծակնային շախմատի առաջնությունը կանցկացվի Երևանում, 2023թ. մարտի 24-ին, ժամը 17:00-ին ըստ հետևյալ տարիքային խմբերի.

Տղաներ

ա. մինչև 8 տարեկան շախմատիստներ,

բ. մինչև 10 տարեկան շախմատիստներ,

գ. մինչև 12 տարեկան շախմատիստներ,

դ. մինչև 14 տարեկան շախմատիստներ,

ե. մինչև 16 տարեկան շախմատիստներ,

զ. մինչև 18 տարեկան շախմատիստներ:

Աղջիկներ

ա. մինչև 10 տարեկան շախմատիստներ,

բ. մինչև 12 տարեկան շախմատիստներ,

գ. մինչև 14 տարեկան շախմատիստներ,

դ. մինչև 18 տարեկան շախմատիստներ:

Բոլոր մրցաշարերը անցկացվում են շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով:

Հայաստանի պատանիների և աղջիկների կայծակնային շախմատի առաջնությունը համարվում է ընտրական փուլ աշխարհի արագ և կայծակնային շախմատի առաջնության համար: Մրցաշարերում 1-3-րդ տեղերը զբաղեցրած մասնակիցները կպարգևատրվեն գավաթներով, մեդալներով և պատվոգրերով:

Հավասար միավորներ վաստակելու դեպքում բոլոր մրցաշարերում տեղերը կորոշվեն.

ա) հատված Բուխհոլցի (-1) գործակցի,

բ) Բուխհոլցի գործակցի,

գ) ըստ անձնական հանդիպման (հանդիպումների) արդյունքի,

դ) ըստ սև գույնի խաղաքարերով խաղացած պարտիաների առավելագույն քանակի:

Առաջնության յուրաքանչյուր խմբի 1-10-րդ տեղերը զբաղեցրած շախմատիստներն իրավունք կստանան սեփական միջոցների հաշվին մասնակցելու աշխարհի արագ և կայծակնային շախմատի առաջնությանը, որը տեղի է ունենալու 2023թ.-ի հունիսի 5-12-ը Վրաստանի Բաթումի քաղաքում /https://bit.ly/3yb4sme/

Հայաստանի պատանիների և աղջիկների շախմատի առաջնության եզրափակիչ մրցաշարի մասնակիցները նույնպես իրավունք ունեն սեփական միջոցների հաշվին մասնակցելու աշխարհի արագ և կայծակնային շախմատի առաջնությանը:

Մրցաշարերում իրավունք ունեն մասնակցելու այն շախմատիստները, ովքեր ունեն.

Տղաներ

ա. մինչև 8 տարեկան շախմատիստներ՝ առնվազն IV կարգի 1 բալ,

բ. մինչև 10 տարեկան շախմատիստներ՝ առնվազն III կարգ,

գ. մինչև 12 տարեկան շախմատիստներ՝ առնվազն II կարգ,

դ. մինչև 14 տարեկան շախմատիստներ՝ առնվազն I կարգ,

ե. մինչև 16 տարեկան շախմատիստներ՝ ազգային վարկանիշ,

զ. մինչև 18 տարեկան շախմատիստներ՝ ազգային վարկանիշ:

Աղջիկներ

ա. մինչև 10 տարեկան շախմատիստներ՝ առնվազն IV կարգ,

բ. մինչև 12 տարեկան շախմատիստներ՝ առնվազն III կարգ,

գ. մինչև 14 տարեկան շախմատիստներ՝ առնվազն II կարգ,

դ. մինչև 18 տարեկան շախմատիստներ՝ ազգային վարկանիշ:

Տղաների և աղջիկների մինչև 14, 16 և 18 խմբերում կհաշվարկվի միջազգային (ՖԻԴԵ) բլիցի վարկանիշ:

Այս խմբերի մասնակիցները պարտադիր պետք է ունենան ՖԻԴԵ-ի նույնականացման համար /FIDE ID/, իսկ չունենալու դեպքում նախապես դիմեն Հայաստանի շախմատի ֆեդերացիա /հեռ. 010-448473/ մինչև մարտի 20-ը:

<u>Ժ Ա Մ Ա Կ Ա Ր Գ</u>

5 րոպե մինչև խաղի ավարտը՝ յուրաքանչյուր քայլի համար 3 վայրկյան հավելումով:

<u>ՄՈՒՏՔԱՎՃԱՐ</u>

մինչև մարտի 17-ը՝ ժամը 18:00-ն,

- Տղաների և աղջիկների մինչև 14, 16 և 18 խմբեր – **5000 ՀՀ դրամ**
- Տղաների և աղջիկների մինչև 8, 10 և 12 խմբեր – **3000 ՀՀ դրամ**

<u>ԳՐԱՆՑՈՒՄ</u>

Մասնակցության վճարները կարող եք փոխանցել «Հայաստանի շախմատի ֆեդերացիա» ՀԿ հետևյալ հաշվեհամարին՝

Շահառու՝ «Հայաստանի շախմատի ֆեդերացիա» ՀԿ
Բանկ՝ ԱրարատԲանկ ԲԲԸ
Հ/հ՝ 1510002020290100
ՀՎՀՀ՝ 01515033

Փոխանցում կատարելիս նպատակ դաշտում պարտադիր նշել **Կայծակնային շախմատի առաջնություն, տարիքային խումբ, մասնակցի անուն, ազգանուն և հայրանուն, ծննդյան տվյալներ, հեռախոսահամար, կարգ/վարկանիշ, մարզիչ**:

<u>ՈՒ Շ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն</u>

Մարտի 17-ից գրանցման հայտեր չեն ընդունվում:

Մասնակիցների և մարզիչների բոլոր ծախսերը հոգում է գործուղող կազմակերպությունը:

Մանրամասների համար զանգահարել 043-448473 հեռախոսահամարով:

Հայաստանի պատանիների և աղջիկների կայծակնայինի շախմատի առաջնությունը կանցկացվի Հայաստանի շախմատի ակադեմիայում /հասցե՝ Շևչենկոյի փող. 34, հեռ.: 448473/: